

դպրութենէ երկնից բարութեանն¹, տալով դատաստան², գեհենին այրմամբ, զանձանց եւ զժողովրդոցն³ կորստեան: 59 Եւ այլ կարգն եւ միւս եւս կէս կարգին⁴, որ երեւեցաւ քեզ գրեալ սքանչելապէս ոսկի գրով ի ստորին եզեր մագաղաթին՝ ծանի՛ր հաւաստեալ, զի մերձ յերեւումս պղծոյն անապատի դարձեալ յառնէ թագաւոր յազգէդ⁵ Արշակունեաց, եւ նորոգի աթոռ հայրապետութեան ի շառաւիղէ⁶ սրբոյն Գրիգորի: 60 Եւ վասն զի⁷ ոչ էին արհամարհեալք եւ ընկեցեալք յերկիր ի կոխումս, այլ յայտական երեւմամբ կայր գունդն⁸, եւ ծալեալ պատուականութեամբ ցուցաւ նափորտն⁹, որ եւս առաւել հաստատապէս¹⁰ ցուցաւ քեզ. եւ ծանոյց զայս¹¹ վերին ազդեցութիւնս սքանչելատեսիլ ոսկեգիր կարգովն եւ կարգակիսան¹², որ ի ժամանակս գոռոզացելոյ թշնամոյն արդարութեան նստի¹³ քահանայապետ արդար, ի ցեղէ¹⁴ սրբոյն Գրիգորի. եւ քահանայացեալ առաջինն կատարէ զաւուրս իւր¹⁵, կրեալ¹⁶ ճգնութիւնս բազումս ի սուտ առաքելոց իշխանին կորստեան, եւ վախճանի խաղաղական հանգստիւ¹⁷ եւ ոչ սրով: 61 Եւ միւս զաւակ նորին յաջորդեալ զաթոռ քահանայապետութեանն՝¹⁸ բազում եւ ազգի ազգի համբերեալ քերանաց եւ զանից, սովոյ եւ հալածանաց¹⁹ եւ դառն նեղութեան²⁰ ժամանակս բազումս՝ յանաւրէն իշխանին²¹ դահճացն սրով ընկալցի զվճիռ մարտիրոսութեան²²: 62 Այն զի ցուցաւ քեզ ի կարգին մասն մի ի գրելոցն²³

1 ԲԳՄ. բարութենէն

2 Ձ. դատաստանաւ

3 ԲԳՄ. ժողովրդեանն

4 ՁԱՄ. կարգ մի եւ կէս կարգին

5 Ձ. յազգէտ

6 ՏՏ. ի շառաւիղէ

7 ԲԳՄ. Գրիգորի: Վասն զի

8 Ձ. կայ գունդն

9 ԲԳՄ. ցուցաւ քեզ նափ...

10 Ձ. չիք հաստատապէս

11 ԱՄ. չիք զայս

12 ՁԱՄ. կարգակիսովն

13 ՏՏ. նստցի

14 ԲԳՄ. ի ճշմարիտ վիճակէ ցեղին

15 ՁԱՄ. կատարէ զկեանս իւր

16 Ձ. կրել

17 ՁԱՄ. հանգստեամբ

18 ԲԳՄ. եւ բազում... եւ սովոյ

19 ԱՄ. եւ զանից, սովոյ եւ հալած...

20 Ձ. եւ զանից, սովոյ, նեղութեան

21 ՁԱՄ. չիք իշխանին

22 ԲԳՄ. զվախճանմարտիր...

23 ԲԳՄ. գրելոցն